ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հոկտ. 15-ին երեկոյեան 8 ժամ 28 րոպէին Էջմիածնում զգացուեց երկրաշարժի մի շատ զօրեղ հարուած՝ հատուկ և կարճ՝ որ հազիւ տևեց 2–3 վայրկեան։ Հարուածի թափը հարաւ–արևելքից հիւսիս–արևմուտք էր։ Հարուածի թափը մինչ այն աստիճան զօրեղ էր՝ որ մեծ զանգակատան զանգերը ղօղանջել սկսեցին։

Միաբանութիւնը իրենց սենեակներից դուրս ելաւ իսկոյն՝ երկիւղ կրելով՝ երկրորդ հարուածից՝ որ եթէ կըրկնուէր բաւական վնասներ կարող էր պատճառել։

Ն. Վեհափառութեան առաջին հոգս ու մտածողութեան խնդիրն եղաւ Մ. Տաճարի և մանաւանդ Իջման ս. սեղանի ապահովութեան խնդիրը։ Մի քանի րոպէից յետոյ ստուգուեցաւ՝ որ Իջման ս. սեղանն անվնաս էր՝ իսկ Մ. Տաճարի մասին՝ ուշ գիշեր լինելու պատճառով՝ անկարելի էր ստուգութիւն կատարել։

* *
*

Մ. Տաճարի անվնաս մնալու խնդիրը ստուգութեան ենթարկուեցաւ հետևեալ առաւօտեան։ Մանրազնին հետազօտութիւնից յետոյ երևեցաւ՝ որ ընդհանուր առմամբ Մ. Տաճարը՝ թէև անվնաս է մնացած՝ սակայն բաւական զգալի վնասներ ստացել են հիւսիսային և՝ մանաւանդ՝ հարաւային կողմերում եղած փոքրիկ գմբէթները։

* *
*

Հոկտ. 16-ին՝ ճաշից յետոյ՝ Ն. Սրբութիւնն անձամբ այցելեց Ս. Հռիփսիմեանց վանքը՝ դիտելու՝ արդեօք վնասուած չէ նաև մեր ճարտարապետութեան հնադարեան այդ գեղեցիկ կոթողը։ Ն. Սրբութեան հետևում էին իւր դիւանապետ Տ. Տիրայր Ծ. վարդապետ և Սինոդի անդամ Տ. Գէորգ վարդապետ։

Ն. Սրբութեան ընդունեց վանքի վանահայր Տ. Դարեգին Ծ. վարդապետը և իւր նոյն օրն առաւօտեան կատարած դիտողութիւնները հաղորդեց Ն. Սրբութեան։ Վանքի ներսը, հարաւ-արևմտեան փոքրիկ խորանի և տաճարի մէջ գտնուող պատը ճեղքուել էր վերից վար։

Ն. Վեհափառութիւնը մի առ մի դիտելով բոլոր ինաները և գոհունակութիւն մատուցանելով, որ հայ ճարտարապետութեան այդ չնաշխարհիկ բեկորը անվնաս էր մնացած, պատուիրեց Տ. Գէորգ վարդապետին «Թագաւոր երկնաւոր» շարականը երգել ի նշան իւր շնորհապարտ զգացմանց։ Եւ այդ հակիրճ ու ջերմին աղօթքից յետոյ ելաւ, փոքր ինչ հանգստանալով Ս. Հռիփսիմեանց վանատանը, վերադարձաւ Մ. Աթոռ։

* * *

Երկրաշարժի հարուածի ոյժն աւելի զգալի է եղել Մասիսի հիւսիս-արևելեան կողմն ընկած գիւղերում, ուր մի քանի գիւղերում տներն են ինաուած, կտուրները թափուած, պատերը շուռ եկած, սակայն առանց մարդկային զոհերի։

Շինութիւնների ինաներ և մարդկային զոհեր չէ եղած ամենևին Վաղարշապատում և շրջակայքում։—Համանման զօրեղ ցնցում եղել է նաև Երևանում։

* * *

Հոկտ. 17-ին Մ. Տաճարում Կայսերական մաղթանք կատարուեցաւ ի յիշատակ Կայսերական ընտանիքի հրաշալի ազատութեան, միաբանական ամբողջ ուխտի ներկայութեամբ և գլխաւորութեամբ Ն. Սրբութեան։

Պատարագիչ և հանդիսադիրն էր Դեր. Տ. Մատթէոս եպիսկոպոսը։

* * *

Նոյն օրը Մ. Աթոռ ժամանեց Պետական Դումայի նախկին անդամ Յովհ. Սաղաթելեան և արժանացաւ Ն. Սրբութեան առանձին ունկնդրութեան։

* * *

Հոկտ. 21-ին Ն. Կ. Մեծութեանց գահակալութեան տարեդարձի առթիւ գոհաբանական մաղթանք կատարուեցաւ Մ. Աթոռում։

Ն. Սրբութիւնը բարեհաճեց Տաճար իջնել և ամբողջ միաբանական ուխտի գլուխ անցած ներկայ եղաւ մաղթանքին։

Պատարագիչն ու հանդիսադիրն էր Դեր. Տ. Մատթէոս եպիսկոպոս։

* *
*

Հոկտ. 25-ին Ն. Վեհափառութեան յանձնարարութեամբ Տփխիս մեկնեց մի քանի օրով Հայրապետական Դիւանապետ Տ. Տիրայր Ծ. վարդապետ։ Մինչև նորա վերադարձը Դիւանապետի պաշտօն կատարում էր Տ. Գէորգ վարդապետ։

* *
*

Հոկտ. 27-ին Աշտարակի շրջանի հաշտարար-դատաւոր և Պետական Դումայի նախկին-անդամ Յովհ. Սաղաթելեան Մ. Աթոռ ժամանեց և արժանացաւ Ն. Սրբութեան առանձին ունկնդրութեան։

* *
*

Ն. Սրբութիւնն ի նկատի ունենալով Կարնոյ շրջանի տարաբաղդ Հայութեան ծանր դրութիւնը, որով տարիներից ի վեր զրկուած են հոգևոր հովուի այցելութիւնից, բարեհաճեց Կարին ուղարկել Մ. Աթոռի միաբան Տ. Զաւէն վարդապետին, որի վերայ պարտիք դրուեցաւ այցելել Կարին, և եթէ անհրաժեշտութիւն նկատուի, նաև շրջակայ գիւղերն ու աւանները, հոգեպէս մխիթարել նոցա ի դիմաց Հայոց Հայրապետի և ըստ հնարաւորութեան սփոփել և քաջալերել հոգեկան արիութեամբ դիմադրաւել ծանր փորձութիւնների այս շրջանին։

Տ. Զաւէն վարդապետը մեկնեց Երևան, հոկտ. 31-ին, այնտեղից իւր առաքելութեան գնալու։ Տ. Զաւէն վարդապետը տարաւ իւր հետ ս. Էջմիածնի Եղբ. Օգնութեան

Գլխ. Կարգադիր Յանձնաժողովի կողմից բաւականաչափ ձմեռուայ զգեստ կարօտաւորներին բաշխելու համար։— Բացի այդ արտօնուեցաւ Նորան, Ն. Սրբութեան կողմից, եթէ անհրաժեշտութիւն և հարկ լինի, բանալ այնտեղ նաև Եղբ. Օգնութեան ճիւղ, խնամելու և հոգալու Կարնոյ և շրջանի Հայութեան անհրաժեշտ պէտքերը, միւս հայ ընկերութիւնների համագործակցութեամբ։

Տ. Հաւէն վարդապետի այնտեղ մնալու հոգացութիւնն ու ծախքերը հոգում է ս. Էջմիածնի Եղբ. Օգնութեան Գլխ. Կարգադիր Յանձնաժողովը։

* *
*

Նոյեմբ. 2-ին Տփխիսից վերադարձաւ Մ. Աթոռ Հայրապետական Դիւանապետ Տ. Տիրայր Ծ. վարդապետը։

* *
*

Նոյեմբ. 8-ին Մ. Աթոռ ժամանեց Պետական Դումայի անդամ պ. Միքայէլ Պապաջանեան։

Ն. Սրբութիւնը հաճեց առանձին ունկնդրութիւն շնորհել պ. Պապաջանեանին և նորա ամուսնուն՝ տիկ. Թամարա Պապաջանեանին։

Նոյն օրը, երեկոյեան, պ. Պապաջանեանը կրկին արժանացաւ Ն. Սրբութեան ունկնդրութեան, որի ժամանակ շահեկան տեղեկութիւններ հաղորդեց իւր կատարած այցերի նկատմամբ Վ.Եհ. Հայրապետին, զեկուցանելով այցելած վայրերի գաղթականների դրութեան, պարենաւորման գործի վիճակի, հագուստի և այլ նպաստների մասին։ Ունկնդրութիւնը տևեց մի ժամից աւելի։

* *
*

Նոյեմբ. 9-ին պ. Պապաջանեանը այցելեց Հայրապետ. Դիւանապետ Տ. Տիրայր Ծ. վարդապետի հետ Մ. Աթոռի շուրջն եղած գաղթավայրերի գլխաւոր կենդրոնները՝ Օշական և Աշտարակ, ուր մի առ մի այցելեցին բոլոր որբանոցները, դպրոցները և հիւանդանոցները, ծանօթանալով

ի մօտոյ գաղթականական պիտոյքների և կարիքների որբանոցների կացութեան և վիճակի, դպրոցական դասաւանդութեան եղանակի, ծաւալի և գործի յաջողութեան և այլ պայմանների հետ։ Թէ Օշականում և թէ Աշտարակում այցելած բոլոր մարդասիրական–եղբայրական գթասրտութեան գործը շատ լաւ տպաւորութիւն թողեց այցելողների վերայ, ուր եռանդով աշխատում են Մոսկուայի Հայոց Ցանձնաժողովի անդամները։

* * *

Նոյն օրը պ. Պապաջանեան այցելեց ս. Էջմիածնի Եղբ. Օգնութեան բոլոր հաստատութիւնները—որբանոցները, որոնց թիւը արդէն հասնում է վեցի, հիւանդանոցները, փուռը, գրասենեակը, դպրոցները՝ Եղբ. Օգն. Գլխ. Կարգադիր Ցանձնաժողովի նախագահ Տ. Գէորգ վարդապետի հետ։ Լսելով նորա բացատրութիւնները, միանգամայն գոհ մնաց գաղթականութեան համար տարուած անվերջ հսկողութեան և խնամքի համար և իւր կատարեալ աջակցութիւնը խոստացաւ, ըստ հնարաւորութեան, որպէս զի օգնութեան գործն անսայթաք ընթանայ։

Թէ Օշականում, թէ Աշտարակում և թէ Էջմիածնում գաղթական մարմինները իրենց կարիքների և ցանկութիւնների համար բերանացի և գրաւոր դիմումներ արին նորան, իբրև Պետակ. Դումայի անդամի, որ և խոստացաւ իւր աջակցութիւնը՝ օրինական սահմաններում և ըստ չափու հնարաւորութեան։

* * *

Երեկոյեան, թէյի ժամանակ, մտքերի ընդարձակ փոխանակութիւն եղաւ միաբանական ուխտի անդամներից շատերի հետ։ Պ. Պապաջանեան ծանօթացաւ այն մեծ և եռանդուն գործի հետ, որ Մ. Աթոռի միաբանական ուխտը սկսած իւր Վեհ. Գլխից, մինչև վերջին միաբանակիցը կատարել է, եռանդով ու սիրով, առանց արտաքին օգնութեան և այժերի և այսօր ևս շարունակում է նոյն հո-

գով, ի նկատի ունենալով տառապող հայութեան մեծ կարիքը և աշխատելով իւր ոյժերի չափ և աւելի ևս սպեղանի և դարման դնել նոցա վէրքերի վերայ։ Պր. Պապաջանեան ևս իւր կողմից շահեկան տեղեկութիւններ հաղորդեց իւր կատարած այցելութիւններից, դիտողութիւններից։ Զուտ ընտանեկան բնոյթ կրող այդ ժամանցը երկուստէք հաճելի տպաւորութիւնների տակ, վերջացաւ բաւական ուշ։

* *
*

Նոյեմբ. 16-ին, պ. Պապաջանեան, վայելելով Մ. Աթոռի հիւրասիրութիւնը, մեկնեց իւր ամուսնու հետ Երևան, որտեղից մտադիր են անցնել Պարսկաստան, ապա Վան, Երզնկա և Կարին, այդ բոլոր վայրերում ի մօտոյ ծանօթանալու գաղթականութեան կարիքների և նոցա հետ կապուած անմիջական խնդիրների հետ և ապա Տփխիսի վերայով անցնել Պետրոգրադ։

* *
*

Նոյ. 12-ին, Կովկասեան գաղթականութեան պարենաւորման գլխաւոր կարգադրիչ Գեներ. Թումանշեանի օգնական պր. Լևոն Գ. Եւանգուլեանը, գլխաւոր բժիշկ Մեասնիկեանի հետ ժամանեցին Մ. Աթոռ և այցելեցին բոլոր հիւանդանոցները։ Բժ. Մեասնիկեանը յատուկ յանձնարարութիւն ունէր շրջելու շրջակայ բոլոր հիւանդանոցները և ծանօթանալու նոցա բժշկական-առողջապահական վիճակի հետ։

Երեկոյեան պ. Եւանգուլեան արժանացաւ Ն. Սրբութեան առանձին ունկնդրութեան։

Նոյն երեկոյ մեկնեցին Երևան։

* *
*

Նոյ. 13-ին Ս. Էջմիածնի Գլխ. Կարգադիր Յանձնաժողովի նախագահ Տ. Գէորգ վարդապետի նախագահութեամբ և մասնակցութեամբ պ. Լևոն Եւանգուլեանի և գաղթականութեան խնամարկութեան «Արևմտահայ Յանձնաժո-

ղովի» անդամների ներկայութեամբ տեղի ունեցաւ խորհրդակցութիւն, դաղթականութեան համար բացուելիք գըպրոցների և նոցա պահպանութեան հետ կապ ունեցող խնդիրների պարզաբանութեան և կազմակերպութեան նկատմամբ։

* *
*

Նոյ. 14-ին, Ն. Կ. Մ. Մայր-Թաղուհի Մարիա Ֆէօդորովնայի ծննդեան առթիւ մաղթանք կատարուեցաւ Մ. Աթոռում, որին ներկայ էր ամբողջ միաբանութիւնը, գըլխաւորութեամբ Վեհ. Հայրապետի։

Պատարագիչն ու հանդիսադիրն էր Գեր. Տ. Աշոտ եպիսկոպոս։

* *
*

Նոյեմբ. 15-ին Մ. Աթոռից Տփխիս մեկնեցին Սինոդի անդամներ Տ. Մատթէոս եպիսկոպոս և Տ. Դէորդ վարդապետ՝ Ն. Սրբութեան կողմից մի քանի յանձնարարութիւններով։

* *
*

Նոյեմբ. 15-ին Իգդիրից հեռագիր է ստացւում, թէ «Իգդիր են դիմում տասն և հինգ հազար հոգի, ուղարկեցէք պաշար, նաւթ, հաց, վառարաններ, ղդեստ»։

Հեռագիրն ուղղուած էր Քաղաքների Միութեան ներկայացուցիչ պ. Բժ. Մանդինեանին, որը տեղեկութիւն տալով այդ մասին Եղբ. Օգն. Գլխաւոր Յանձնաժողովին, խնդրում էր և նորա գործակցութիւնը։

Տ. Դէորդ վարդապետի Տփխիս մեկնելով, նորա պաշտօնը, Եղբ. Օգն. Գլխ. Կարգադիր Յանձնաժողովի գործերի ղեկավարութիւնը յանձնուած լինելով Տ. Տիրայր Ծ. վարդապետին, վերջինս Վեհ. Հայրապետի պատուէրով Երևան մեկնեց, ընդհանուր ժողովում խորհրդակցելու անելիք օգնութեան չափի, քանակի և եղանակի մասին։ Որոշուեցաւ, որ 1) Եղբայրական Օգն. Գլխ. Կարգադիր Յանձնաժողովը իւր կողմից կտայ բաւական քանակութեամբ

ալիւր և թխած հաց ուղարկելու գաղթականութեան ընդառաջ՝ Իգդիր. 2) Քաղաքների Միութիւնը իւր վերայ կառնէ նոր հասնող գաղթի հետ կապուած բոլոր ծախքերը՝ հիւանդների խնամածութեան առողջապահիկ կայարաններ ունենալու հոգսը.—3) Հաստատել զանազան սննդաւոր, բժշկական, առողջապահիկ կայաններ գաղթականների դէպի Իգդիր դիմող գծի վերայ.—4) Իգդիրն ընդունել իբրև կենդրոն եկող գաղթականութեան և այնտեղից հետզհետէ բաժանել գաղթականներին, ուղարկելով Հին–Նախիջևանի շրջանը 3000 հոգի, Սուրմալուի գաւառը 2000 հոգի, Լոռու շրջանը 3000 հոգի, Աշտարակի շրջանը 3000 հոգի, իսկ Ճեացածն էլ ցրուել զանազան տեղեր փոքր քանակութեամբ։ 5) Հեռագրով դիմել գաղթականութեան գործի գլխ. ղեկավար գեն. Թամամշեանին, խնդրելով նորա աջակցութիւնը։

* *
*

Նոյեմբ. 16-ին գաղթականութեան ընդ առաջ մեկնեց պ. Լև. Եւանգուլեան, որ տեղն ու տեղը կարգադրութիւն արեց նոր հասնող գաղթականներին սկզբնական օգնութիւն ցոյց տալ և հանգստանալուց յետոյ ուղարկել նոցա համար որոշուած տեղերը։—Նոյն օրը Երևանի քաղաքային պահեստից երկու վագոն ալիւր յատկացուեցաւ հետզհետէ ժամանող գաղթականներին կերակրելու համար։

* *
*

Բարեբաղդաբար գաղթականութեան հոսանքը այս անգամ շատ շուտ կտրուեց, որովհետև խուճապի պատճառները վերացնելու արագ հնարաւորութիւն եղաւ։ Սակայն և այնպէս 15-ին արդէն Իգդիր էին հասել մօտ 800 հոգի Վանի շրջանից, 16-ին 20—25 հեծեալ, որոնք և տեղեկութիւն տուին գաղթականութեան սկզբնապատճառների մասին։ 19-ին Իգդիր են հասնում մօտ 60 հոգի, հիւանդ, որոնց և տեղաւորում են ու խնամում հիւանդանոցներում, 20-ին 4 ֆուրգոն, 20—25 սայլ գաղթականներով, գլխաւորապէս մանկահասակ և թոյլեր և 3—400 հոգի

առողջ։—Նոցա ընդունելութեան և սննդի համար կայաններ էին հաստատուած Զենգիլ և Կարէ։

* * *

16-ին Մ. Աթոռ ժամանեց Մ. Տաճարի վերանորոգութեան ծանձնաժողովի ներկայացուցիչ ճարտարապետ պ. Քրիստ. Տէր Սարգսեան, որի առաքելութեան նպատակն էր տեղն ու տեղը մի առ մի զննել հոկտ. 15-ի երկրաշարժի հետևանքները և այդ մասին զեկուցանել ծանձնաժողովի խորհրդին, կարևոր միջոցներ ձեռք առնելու և վնասուածները նորոգելու։

Տփխիսում, Վեհ. Հայրապետի յանձնարարութեամբ կազմուած խորհրդակցական ժողովը,—որին մասնակցում էին Տ. Մխիթար եպիսկոպոս, Տ. Տիրայր ծ. վարդապետ և Մ. Տաճարի վերանորոգութեան ծանձնաժողովի անդամներ պ. պ. Բաշինջաղեան, Գրենևսկիյ, Կալգին, Տէր Միքէլեան, Տէր Սարգսեան, Ֆէդվաջեան և Մարտիրոսեան, լսելով Տ. Տիրայր ծ. վարդապետի բանաւոր զեկուցումը, որոշել էր ուղարկել իւր անդամներից մէկին յատկապէս առ տեղեաւն ուսումնասիրելու երկրաշարժի հետևանքները։

Պ. Տէր Սարգսեան արժանացաւ Ն. Սրբութեան ունկընդրութեան և պատուէր ստացաւ մանրազննին ուշադրութեամբ դիտել Մ. Տաճարը և ս. Հռիփսիմեանց վանքը և ապա զեկուցանել իրեն։

Նոյ. 16-ին և 17-ին պ. Տէր Սարգսեան մանրազննին հետազօտութեան ենթարկեց Մ. Տաճարի ներսը, դրսի մասերը, գմբէթները, կամարները, ինչպէս և ս. Հռիփսիմեանց վանքը և իւր հետազօտութիւնները 18-ին զեկուցեց Ն. Սրբութեան։

Ճարտարապետի կարծիքով ա) Մ. Տաճարի ներսի կողմից թէև թեթև ճեղքուածիներ կան, սակայն դոքա անվնաս երևոյթներ են և աւելի ծեփերի վնաս. բ) Հարաւ-արևելեան և հարաւ-արևմտեան սիւների վերայ ճեղքուածները հին, կցորդուած և աղիւսակերտ մասերի ճեղքուածներ

ներն են և միայն նոցա թեթևակի բաժանումն է մայր սիւներից, որ առաջացրել է այդ երևոյթը, սակայն առանց հիմնական վնասներ տալու բնոյթի. գ) իշման ս. Սեղանի հիւսիս-արևելեան անկեան վարի շարժումը ոչ մի խախտման առիթ լինել չէ կարող. այդ քարը կարելի է ամենայն դիւրութեամբ հանել և նորից իւր տեղը դնել։ Գմբէթի սիւները այնքան հաստատուն են և ամուր, որ երկիւղի առիթ տալ ամենևին չեն կարող. դ) Մ. Տաճարի ներքին կամարների վերայ երկրաշարժի թափը ոչ մի ազդեցութիւն չէ ունեցած. ե) դրսի կողմից հիւսիսային փոքրիկ գմբէթի տակ եղած պատի ճեղքուածքը անվտանգ է և կարելի է շաղախով միաւորել և ամրացնել.—զ) միակ վնասուած մասը Մ. Տաճարի հարաւային փոքրիկ գմբէթն է, որի ներքին սիւները բաւական խախտուած են, հարուածի ոյժից սիւների քարերը ճաքճքուած. ստորին մեծ և վերին փոքրիկ կամարները ճեղքուածներ ստացած։ է) Ս. Հռիփսիմէի տաճարի ճեղքուածները վնաս բերելու բնոյթ չունին, սակայն առաջին պատեհութեան պիտի նորոգել և լցնել։ Այդ ճեղքուածները նախորդ ճեղքուածների տեղերի վրայով են անցած և դժբաղդաբար, վերջին նորոգութեան ժամանակ բաւական անուշադիր են եղել դէպի այդ վնասուած մասերը և կրաշաղախով չեն լցրել՝ անվնաս դարձնելու համար։

Ն. Սրբութիւնը լսելով այս մանրամասն զեկուցումը պատուիրեց Տփխիս վերադառնալ, անմիջապէս ժողովի հրաւիրել Վերանորոգութեան Յանձնաժողովի անդամներին, զեկուցանել նոցա իւր դիտողութիւնների մասին և նոցա եզրակացութիւնը իրեն հաղորդել անմիջապէս, կարևորը կարգադրելու համար։

Պ. Տէր Սարգսեան մեկնեց Մ. Աթոռից Տփխիս նոյ. 19-ի առաւօտեան։

* * *

Նոյ. 23-ին, երեկոյեան, Վաղարշապատ հասան Կովկասեան *** մասի զինուորներից մի վաշտ, ձմեռելու և հանգստանալու համար։

Ի նկատի ունենալով, որ զինուորները երկար ժամանակ պատերազմի դաշտում ծանր զրկանքների ենթարկուած լինելով կարևոր էր նոցա համար դիւրութիւններ ստեղծել Մ. Աթոռը իւր ագարակի մէջ տեղաւորեց նոցանից մի մասը, իսկ մեծամասնութիւնը տեղ գտան Մ. Աթոռի շուկայի խանութներում, ուր երկու տարուց ի վեր ապաստան էին գտած գաղթականները։

Թէև զինուորների համար տեղեր էին յատկացրած գիւղում, զանազան անձերի մօտ, սակայն ցրուած բնակարաններում, որով մի կողմից զինուորական կարգապահութիւնն էր վտանգւում, իսկ միւս կողմից կարող էր ոչ-ցանկալի երևոյթների տեղիք տալ, հասարակական ներկայացուցիչների դիմումը, ինչպէս և զինուորական իշխանութեան դիւրութիւններ տալուն ընդառաջ գնալով, որոշուեցաւ գաղթականներին առ այժմ տեղափոխել գիւղացիների այն տները, որ յատկացրած էին զինուորների համար, իսկ զինուորներին ամբողջապէս տեղաւորել շուկայում։

* *
*

Նոյեմ. 29-ին Մ. Աթոռ ժամանեց պր. Ռոստոմ Զօրեան, որ արժանացաւ Ն. Վեհափառութեան ունկնդրութեան։

* *
*

Դեկտ. 1-ին Մ. Աթոռ հասաւ Աղբակի ս. Բարդուղիմէոս վանքի վանահայր Տ. Վահրամ վարդապետ Կանաչեան, որ մօտ մի ամիս պիտի մնայ այս շրջանում։

Տ. Վահրամ վարդապետ արժանացաւ Ն. Սրբութեան ունկնդրութեան, տեղեկութիւններ հաղորդելով իւր շրջանի գաղթականութեան արդի դրութեան և զեկուցանելով իւր վանքի վիճակի մասին։ Ս. Բարդուղիմէոսի վանքը պատապարել է իւր մէջ մի հիւանդանոց, 25 մահճակալով, մի

որբանոց 30—35 որբերով և ունի դպրոց, ուր յաճախում են որբերը և «Վանքի գիւղի» փոքրիկները։ Ս. Բարդուղիմէոսի մօտ գտնւում է «Վանքի գիւղ» անունով գիւղը, 35 տնով, որի բնակիչների մի մասը մօտ 10—15 տուն, վերջին դէպքերի ժամանակ ցրուած են զանազան կողմեր։

Թէ հիւանդանոցը և թէ որբանոցը պահպանւում են «Տատեանեան Ցանձնաժողովի» միջոցներով և Քաղաքների Միութեան օժանդակութեամբ։ Վանքի դրութիւնը համեմատաբար բարւոք է, մի մասը վերանորոգած, ուր և զետեղուած են այդ հաստատութիւնները։

Դժբաղդաբար, վերջին երկրաշարժի զօրեղ հարուածից վանքի հիւսիս-արևելեան կողմը բաւական մեծ տարածութեամբ, վեց արշին երկարութեամբ և մի արշին բարձրութեամբ, քանդուել է, որից և վանքը բաւական ճնշուել է. սակայն Ատրպատականի առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսը գարնան բացուելով պիտի ձեռնարկէ նորոգութեան և վերաշինութեան։

Փլուածքը կատարուել է գիշերը և մարդկային զոհեր չէ ունեցած։

* *
*

Դեկտ. 3-ին Մ. Աթոռ ժամանեց Տատեանեան Ցանձնաժողովի Սալմաստի-Խոյի շրջանի լիազօր պր. Սիրական Տիգրանեան, որ արժանացաւ Ն. Սրբութեան ունկնդրութեան։

Պ. Տիգրանեան մեկնում է Խոյ, Ցանձնաժողովի գործերով։

* *
*

Դեկտ. 4-ին Մ. Աթոռ ժամանեց Տփխիսից Եղբ. Օգն. Գլխ. Կարգադիր Ցանձնաժողովի Նախագահ Տ. Գէորգ վարդապետ, որ և ոտանձնեց իւր պաշտօնը։

* *
*

Դեկտ. 6-ին, Ն. Կ. Մեծութեան, Թագաւոր Կայսեր անուանակոչութեան տօնի օրը, մաղթանք կատարուեցաւ Մ. Տաճարում, որին ներկայ էին Ն. Ս. Օծութիւնը և ամբողջ միաբանական ուխտը։

Պատարագիչն Տ. Աշոտ եպիսկոպոս։

* * *

Դեկտ. 13-ին Ն. Սրբութեան առանձին ունկընդրութեան արժանացաւ Ամերիկայի Նպաստամատոյց ընկերութիւնների կովկասեան ներկայացուցիչ պատուելի մ-ր Ֆ. Մըկալլըմ, հետն ունենալով իւր ընկերակիցներ տիկ. Եարրով, պատուելի Եարրով, մ-ր Մէյնարդ, մ-ր Գրէյսի և մ-ր Եարրովի փոքրիկ որդին Ջորջ Եարրով։

Մ-ր Մըկալլըմ, պաշտօն ունէր ներկայացնել Ն. Սրբութեան այն գրութիւնը, որ յանձնարարուած էր իրեն Տֆխիսի Ամերիկեան հիւպատոսարանից, յանուն Միացեալ Նահանգների պ. Նախագահի, ըստ հրահանգի Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարի։

Պատգամաւորութիւնը ներկայանալով Ն. Սրբութեան կարդաց հիւպատոսարանի յղած հետևեալ գրութիւնը.

«Ամերիկական Հիւպատոսարան
«1916 թ. դեկտ. 20 Տֆխիս, Ռուսիա

«Նորին Սրբութեան,
«Մայրագոյն Պատրիարգի եւ Կա-
«թողիկոսի ամենայն Հայոց,
«Էջմիածին.

«Ձերդ Սրբութիւն,

«Միացեալ Նահանգների Արտաքին Գործերի Նախա-
«րարութեան հրահանգի և պատուէրի համաձայն, պաշ-
«տօն ունիմ ծանուցանել Ձերդ Սրբութեան, որ Ձեր կող-

«մից Միացեալ Նահանգների Նախագահին, տարեւոյս հոկտ.
«21-ին ուղղած հեռագիրը՝ ժամանակին ընդունուած է։
«Պ. Նախագահը պատուիրած է ինձ արտայայտել, յանուն
«Իւր, Ձերդ Ս. Օծութեան Իւր ուրախութիւնն ու գոհու-
«նակութիւնը, որ կարողացած է օգնութեան ձեռք կա-
«կարել՝ թեթեւացնելու ներկայ պատերազմի ընթացքում
«այնքան տանջուած Հայութեան տառապանքը։

Ձերդ Սրբութեան հնազանդ ծառայ
Դեսպանատան Քարտուղար,
փոխանորդ Տփխիսի Հիւպատոսի
Ի. Պ. Քեօրսրն»։

Ն. Սրբութիւնը Իւր Ջերմ շնորհակալութիւնը յայտնելով Միացեալ Նահանգների պ. Նախագահի, Մեթակոյտի, Պատգամաւորական ժողովի և ամբողջ Ամերիկայի ժողովրդին նոցա բուն մարդասիրական սիրոյ արտայայտութեան, գթասրտութեան մեծ գործի համար, որոնք օգնութեան եկան տարեւոյս հոկտ. 21 և 22-ին իրենց նուիրաբերութեամբ յօգուտ տանջուած, տառապող և լայն օգնութեան կարօտ Հայութեան, օրհնեց նոցա ամենքին և յանձնարարեց մ-ր Ֆ. Մըկալլըմին Իւր Հայրապետական օրհնութիւնը յայտնելու, որոց պէտք է։

Այնուհետև մ-ր Ֆ. Մըկալլըմ տեղեկութիւններ հաղորդեց Հայանպաստ օրուայ մասին և յայտնեց, որ դեռ ևս ընդհանուր ժողովարարութեան արդիւնքը յայտնի չէ, սակայն պարզուելուց յետոյ ամբողջական նպաստը կյայտնացնուի Իւր բուն նպատակին։

Ապա խօսք եղաւ Միջագետքի Հայութեան մասին, ուր ապաստանած Հայութիւնը ամենադառն օրեր է ապրում։ Մ-ր Ֆ. Մըկալլըմը յայտնեց, որ ամերիկական կառավարութիւնը ամէն հնարաւոր միջոցներ է ձեռք առած Հայերին օգնութեան ձեռք հասցնելու, թէև դժուարութիւններ միշտ կան։

† Տ. ԱԴԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ

Տարեոյր օգոստոսի 28-ին Արգեազու ս. Խաչ վանքում իւր մահկանացուն կնքեց անակնկալ պատահարի ենթարկուելով (պատի փլուածքի տակ ընկնելով) նոյն վանքի վանահայր Տ. Ադամ վրդ. Արզումանեանը։

Ծնուած է 1859 թուին, երկար ժամանակ ծառայել է Ս. Էջմիածնում, վեղար է ստացել 1890 թ. եղել է վանահայր ս. Հռիփսիմէի վանքում, ապա նշանակուել է Արգեազի Ս. Խաչի վանահայր, ուր և մնացել է մինչև իւր վախճանը։

Տէրը լուսաւորէ հանգուցեալի հոգին։

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Մոսկուայում հոկտեմբերի 10-ին բացուել է Մոսկուայի թեմի հոգևորականութեան ժողովը։

* * *

Վրաստանի էկզարխը Սինոդին միջնորդել է աւելացնելու Կովկասի հոգևորականութեան ռոճիկը։

* * *

Սինոդին կից դպրոցական յանձնաժողովը մշակել է մի շարք միջոցներ կրօնի դասաւանդումը կանոնաւորելու միջնակարգ դպրոցներում։ Հոգևոր ճեմարաններում աւանդուելու են կրօնի մեթոդիկա և լինելու են գործնական պարապմունքներ։ Կրօնի դասաւանդման հարցը կանոնաւորելու համար ընտրուեց յանձնաժողով յայտնի մանկավարժ Լասխոտսկի աւ. քահանայի նախագահութեամբ։

* * *